ԵՐՈՒԱՆԴՈՒՆԻՆԵՐԻ ԵՒ ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ԾԱԳՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

ՍԱՐՕ ՍԱՐՈՑԵԱՆ

Հայաստանի հին շրջանի պատմութեան կարեւոր հարցերից է Երուանդունիների արքայական եւ Բագրատունեաց նախարարական տոհմերի ծագումնաբանութիւնը։ Ճիշդ է, այդ հարցով զբաղուել են բաւականին թիւով գիտնականներ՝, սակայն հարցի լուծումը մնացել է բաց կամ թերի։ Այս երկու տոհմերի ծագման վերաբերեալ մեր կողմից այս յօդուածում մէկ միասնական անդրադարձը որոշակի աշխատանքի արդիւնք է եւ որոշակի նպատակ է հետապնդում, որը պարզ կը դառնայ ստորեւ։

Երուանդունիների ծագման վերաբերեալ աղբիւրների տեղեկութիւնները բաժանւում են երեք խմբի՝ ա) տեղեկութիւններ բնիկ տեղական (հայկական) ծագման վերաբերեալ (Մովսէս Խորենացի), բ) տեղեկութիւններ Աքեմենեան տոհմից կամ Աքեմենեան Դարեհ Ա. արքայի (մ.թ.ա. 522-486) զինակից Հիւդարնէսից ծագելու վերաբերեալ (Անտիոքոս Ա. Կոմմագենացու (մ.թ.ա. 69-34) արձանագրութիւնները եւ յունա-հռոմէական գրաւոր աղբիւրները) եւ գ) տեղեկութիւններ Երուանդունիների բակտրիական ծագման վերաբերեալ (Պերգամոնի Բորիաջիք կոչուած վայրում գտնուած արձանագրութիւնը)։ Մասնագիտական գրականութեան մէջ աղբիւրների այս տեղեկութիւններն էլ հիմք են ընդունուել եւ ուսումնասիրողների կողմից օգտագործուել՝ առաջնայնութիւնը տալով խմբերից մէկի կամ միւսի տեղեկութիւններին։

Բագրատունիների ծագման վերաբերեալ աղբիւրների տեղեկութիւնները բաժանւում են երկու խմբի՝ ա) տեղեկութիւններ բնիկ, տեղական (հայկական) ծագման վերաբերեալ (Սեբէոսին կից Անանուն եւ Խորենացի), բ) տեղեկութիւններ հրէական ծագման վերաբերեալ (Խորենացի եւ մէկ տասնեակից աւելի հայոց այլ մատենագիրներ, ինչպէս նաեւ միքանի վրաց մատենագիրներ եւ մ.թ. ԺԵ. դարի բիւզանդացի պատմիչ Կոստանդին Միրանածին)։ Ի տարբերութիւն աղբիւրների կողմից մեզ ընձեռած այս երկու խմբերի, մասնագիտական գրականութեան մէջ Բագրատունեաց տոհմին տրուել են նաեւ այլ ծագումներ՝ իրանական, մաննայական, ուրարտական, եւլն.։



Երուանդունիների ծագման հարցի լաւատեղեակ ուսումնասիրողներից մէկը՝ Ժասմենա Էլչիբեկեանը, բաւականին համոզիչ կերպով ցոյց է տուել, որ աղբիւրների տարբեր տեղեկութիւնները Երուանդունիների ծագման վերաբերեալ, իրականում չեն հակադրւում։ Ըստ նրա՝ Խորենացու մօտ Երուանդ Սակաւակեացից սկիզբ առած դինաստիան շարունակել է իշխել Հայաստանում մինչեւ Երուանդ (Օրոնտաս) վերջինը, որից յետոյ Հայաստանը բաժանուեց Սելեւկեան արքայ Անտիոքոս Գ. Մեծի (մ.թ.ա. 223-187) ստրատեգոսներ Արտաշէսի եւ Զարեհի միջեւ։ Այդ դինաստիայի ներկայացուցիչներից մէկը՝ Արտասուրայի որդի Արուանդէս (Երուանդ-Օրոնտաս) սատրապը ամուսնացել էր Աքեմենեան Արտաքսերքսէս Մնեմոն արքայի (մ.թ.ա. 404-358) դստեր՝ Ռոդոգունէի հետ։ Իսկ Արտաքսերքսէս Մնեմոնը ամուսնացած էր Դարեհ Ա.ի զինակից Հիւդարնէսի տոհմից Հիւդարնէս Գ.ի դստեր՝ Ստատէիրայի հետ, եւ այդ իսկ պատճառով՝ Ռոդոգունէի միջնորդութեամբ, որը Հիւդարնէսի թոռն էր եւ Արտաքսերքսէսի աղջիկը, Երուանդունիներին օտար աղբիւրներում տրուել է Աքեմենեան կամ Հիւդարնեան ծագում։

Ինչ վերաբերում է Երուանդունիների բակտրիական ծագմանը, ապա այն մեզ է հասել Պերգամոնի Բորիաջիք կոչուած վայրում գտնուած արձանագրութիւնից, որտեղ Արտասուրայի որդի Օրոնտաս սատրապը անուանուած է բակտրիացի։ Մենք միայն այս հարցում համաձայն չենք Էլչիբեկեանի հետ, քանի որ նա Օրոնտասի բակտրիական ծագումը թիւրիմացութեան արդիւնք է համարում։ Էլչիբեկեանը նկատում է, որ Բակտրիա քաղաքը եւ Բակտրիանա երկիրը յայտնի են եղել նաեւ Զարիասպա անունով։ Եւ քանի որ Հայաստանի հարաւում յայտնի Զարասպ լեռը աղերսակցւում է Զարիասպային, իսկ մ.թ. Ա. դարի հռոմէացի հեղինակ Պլինիոս Աւագի յիշատակած Արոանդէս (Aroandes) ցեղը բնակուել է Զարիասպա լերան մօտ, Էլչիբեկեանին հիմք են տուել ենթադրելու, թէ «Բակտրիան» թիւրիմացութեան արդիւնք է՝ առաջացած աշխարհագրական նման տեղանունների նոյնացման հողի վրայ՝ Զարիասպ (Բակտրիա)-Զարասպ։

Մեր կարծիքով Էլչիբեկեանը շատ մօտ է եղել իրական բացատրութեանը, սակայն, քանի որ նա միայն նմանութեան արդիւնք է ենթադրել «բակտրիական ծագումը», ապա ստիպուած է եղել սահմանափակուել՝ այն թիւրիմացութեան արդիւնք համարելով։ Մեր կարծիքով այստեղ գործ ունենք ոչ թէ նմանութեան հետ, այլ՝ նոյնութեան, քանի որ Խորենացու վկայութեամբ, բակտրիացիները նոյն մարերն են՝ «զոր աստ ուրեմն Զրադաշտ մոգ,

արքայ Բակտրիացւոց, որ է Մեդաց...»[5]։ Նոյն գլխում Խորենացին, օգտուելով մ.թ. Ե. դարի յոյն պատմագիր Ոլիմպիոդորոսից, գրում է. «Նորին դարձեալ եւ առ եզերբ սահմանացն Բակտրիացւոց ասէին բնակել, (նկատի ունի Քսիսութրոսի – Նոյի – որդի Սեմին –Ս. Ս.), սակաւ աւուրս, մնացեալ եւ մի ոմն յորդւոց նորա անդ։ Քանզի կողմանք արեւելից Զրուան զՍեմ կոչեն, եւ Զրուանդ զգաւառն անուանեալ ասեն մինչեւ ցայժմ»[6]։

Որ այս բակտրիացիները հայկական լեռնաշխարհի մօտ են բնակուել երեւում է Խորենացու միջնորդութեամբ Ոլիմպիոդորոսից բերուած այս հատուածից, քանզի վերջինս՝ խօսելով Սիմ լերան, Տարօն աշխարհի, Սեմի որդի Տարբանի մասին, այնուհետեւ մեր մէջբերած հատուածն է տալիս։ Մեր կարծիքով Միջին Ասիայի Բակտրիա երկրի եւ նրա Զարիասպա անունները իսկապէս կապուած են Հայկական Լեռնաշխարհի հարաւում գտնուող Զարասպ լերան եւ Խորենացու յիշած Բակտրիա երկրի հետ։ Ամենայն հաւանականութեամբ սա հետեւանք է տուեալ վայրում բնակուող ցեղերի մի վայրից միւսը տեղաշարժման, որի հետեւանքով իրենց հետ տարել են նաեւ այն «արբազան» անունները, որոնցով առաջնորդուել են իրենց կեանքում։ Նոյն հաւանականութեամբ, աղբիւրներում զրադաշտական կրօնի հիմնադիր Զրադաշտի ծննդավայրի տարբերութիւնը նոյնպէս այդպիսի տեղաշարժի հետեւանք է։

Արդեօ՞ք Բակտրիա երկիրը գտնուել է հայկական Զարասպ լերան շրջակայքում։ Այս հարցի պատասխանը տալու համար անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ մէկ այլ տոհմի՝ Բագրատունիների ծագմանը։ Աղբիւրների բացարձակ մեծամասնութեան կողմից Բագրատունեաց նախարարական տոհմին տրուած հրէական ծագումը Բագրատունեաց տոհմանունների, անձնանունների եւ տեղանունների պատճառով ուսումնասիրողների բացարձակ մեծամասնութեան կողմից մերժուել է[8]։ Բագրատունեաց տոհմի հայկական ծագման մասին Խորենացին ընդամէնը ակնարկում է. հետեւաբար, միակ լիարժէք աղբիւրը Սեբէոսի Պատմութեանը կիցը Անանուն հեղինակի տեղեկութիւններն են.

Յայնժամ տիրեաց Շամիրամ ի վերայ երկրին Հայաստանեայց, եւ յայնմհետէ Ասորեստանեայց թագաւորքն տիրեցին մինչեւ ցմեռանելն Սենեքարիմայ. ապա ապստամբեցին յԱսորւոց թագաւորացն ծառայութենէ։

Եւ տիրէ ի վերայ նոցա Զարեհ որդի որդւոց Արամենակայ, այր զաւօրաւոր եւ կորովի աղեղամբ. ապա Արմոգ. ապա Սարհանգ. ապա Շաւաշ. ապա Փառանաւազ։

Սա ծնաւ զԲագամ եւ զԲագարատ. եւ Բագարատ ծնաւ զԲիւրատ, եւ Բիւրատ ծնաւ զԱսպատ։ Եւ որդիքն Բագարատայ ժառանգեցին զժառանգութիւնս իւրեանց ի կողմանս արեւմտից, այս ինքն է Անգեղ տուն. վասն զի կոչեցաւ Բագարատ եւ Անգեղ, զոր ի ժամանակին յայնմիկ ազգ բարբարոսացն աստուած կոչեցին։

Այս Փառնաւազ հնազանդեալ Նաբուգոդոնոսորայ արքայի ի Բաբելոն։ Եւ ապա յայնմհետէ Բաբելացւոց եւ Մարաց թագաւորքն տիրեցին մինչեւ ցԱղեքսանդր Մակեդոնացի, որ զամենայն տիեզերս հնազանդեցոյց ի ծառայութիւն։

Անանունի բերուած հատուածը, մեր կարծիքով, կառուցուածքային թերութիւն ունի։ Շարադրուած տեքստից պէտք է տարանջատել Բագրատունիներին վերաբերող ամբողջ հատուածը, այսինքն՝ «Սա ծնաւ զԲագրատ ...»ից մինչեւ «... աստուած կոչեցին», քանի որ այն, ինչպէս պարզորոշ երեւում է, անունների թուարկման այլ ձեւ ունի՝ սկզբնական «ապա»ին փոխարինում է «սա ծնաւ»ը։

Ինչպէս գիտենք, Անանունի սկզբնաղբիւր Մարաբա Մծուրնացին Խորենացու կարեւոր սկզբնաղբիւրներից մէկն է՝ Մար Աբաս Կատինան։ Խորենացու եւ Անանունի երկերի լաւագոյն ուսումնասիրողներից մէկը՝ Մանուկ Աբեղեանը, ցոյց է տուել, որ Խորենացու առաջին գրքի իբ. գլխում գոյութիւն ունի որոշակի անհամապատասխանութիւն։ Խորենացին նշում է, որ յիշելու է մի քանի անուններ, սակայն յիշում է միայն Հրաչեայքին, որի ժամանակ հրեայ Շամբաթից առաջ եկաւ Բագրատունեաց տոհմը։ Աբեղեանի դիպուկ սրբագրմամբ պակասում է Խորենացու հայոց նահապետերի ցուցակի Հրաչեայից անմիջապէս յետոյ եկող անունը՝ Փառնաւազը, որին եւ Բաբելոնի Նաբուգոդոնոսոր թագաւորը տուել է Բագրատունեաց տոհմի հիմնադիր հրեայ Շամբաթին։ Այսպիսով՝ ե՛ւ Խորենացու, ե՛ւ Անանունի մօտ Բաբելոնի Նաբուգոդոնոսոր թագաւորի (մ.թ.ա. 605-562) ժամանակակից հայոց թագաւորը (նահապետը) Փառնաւազն է։ Սակայն եթէ Խորենացին խօսում է Փառնաւազի ժամանակակից հրեայ Շամբաթի մասին, որից առաջ եկաւ Բագրատունեաց տոհմը, Անանունը խօսում է Փառնաւազի որդի Բագարատի մասին (հայկեան ծագում), որից առաջ եկաւ Բագրատունեաց տոհմը։ Անկասկած է, որ սկզբնաղբիւր Մար Աբասի մօտ Փառնաւազին նշելիս ակնարկ է եղել նաեւ Բագրատունեաց տոհմի ծագման մասին, որից ելնելով էլ Խորենացին իր Հայոց պատմութեան տուեալ հատուածում շարադրել է իրեն յայտնի հրեայ Շամբաթի վերաբերեալ աւանդախառն տեղեկու-

թիւնները, իսկ Անանունը՝ իրեն այլ սկզբնաղբիւրից յայտնի Բագրատունեաց տոհմի ծագման տեղեկութիւնները երկու եղբայրների մասին, որից առաջ եկաւ Բագրատունեաց տոհմը։ Սակայն անբացատրելի է մնում, թէ ինչու՛ Անանունը չի վարուել ինչպէս Խորենացին՝ Բագրատունեաց տոհմի նահապետին միայն ժամանակակից համարելով Փառնաւազին, այլ ազգակցութիւն է ստեղծել Բագրատունիների եւ այդ ժամանակ Հայաստանում իշխող տոհմի միջեւ՝ Բագրատունեաց նահապետ Բագարատին համարելով Փառնաւազի որդի։ Այս հարցը բացատրութիւն է ստանում, երբ Բագրատունեաց տոհմը եւ Երուանդունեաց արքայատոհմը ծագած ենք համարում միեւնոյն տարածաշրջանային էթնիկ ազգակից ցեղերից։ Եւ դրա համար հիմնաւոր փաստարկներ աղբիւրներում գտնում ենք։

Մ.թ.ա. 716ին Ասորեստանի Սարգոն Բ. արքան (մ.թ.ա. 722-705 թթ.) արշաւանք ձեռնարկեց Մանայի թագաւորութեան դէմ։ Այդ արշաւանքի պատճառը մանայական գահի համար ծաւալուած այն իրադարձութիւններն էին, որոնք ստիպեցին Սարգոնին՝ տարածաշրջանում հաւասարակշռութեան խախտման պատճառով, լուրջ քայլերի դիմել։ Մանային սահմանակից եւ տուեալ ժամանակաշրջանում նրա մասը կազմող երկու երկրների՝ Ուիշդիշի եւ Զիկիրտուի առաջնորդներ Բագդատտին եւ Մետատտին հակուած էին դէպի Ուրարտու եւ այդ պատճառով կազմակերպում են Ասորեստանին դաշնակից Մանայի թագաւոր Ազայի սպանութիւնը։ Ուիշդիշի տարածքում գտնուող Ուաուշ լերան վրա սպանելով Ազային՝ նրանք գահ են բարձրացնում նրա եղբօրը՝ Ուլլուսունուլին։ Վերջինս նոյնպէս մեղսակից էր սպանութեանը եւ հակուած հակաասորեստանեան դաշինքին։ Այդ պատճառով էլ սպանութեան աներեւոյթ դերակատարին եւ կազմակերպչին՝ Ուրարտուի Ռուսա Ա. թագաւորին (մ.թ.ա. 735-714) զիջում է 22 քաղաք։ Սարգոնն անմիջապէս արշաւանքի է ելնում իր խախտուած դիրքը տարածաշրջանում շտկելու համար։ Նա կարողանում է բռնել եւ մորթազերծ անել Բագդատտիին՝ նոյն Ուիշդիշի Ուաուշ լերան վրայ, իսկ մանայական գահը նա թողնում է Ուլլուսունուլին, քանզի նա կամաւոր կերպով ենթարկուել էր իրեն։ Սակայն հակաասորեստանեան դաշինքը շարունակում էր գործել, եւ այդ պատճառով Սարգոն Բ.ը մ.թ.ա. 714ին արշաւում է անհնազանդ երկրների վրայ եւ հասնելով նոյն Ուիշդիշի Ուաուշ լեռը՝ ճակատամարտ տալիս Ռուսա Ա.ի զօրքերի հետ։ Յաղթելով Ռուսային՝ Սարգոնի համար ճանապարհը բաց էր, եւ նա՝ ոտնակոխ անելով ամբողջ Ուրարտուն, հասնում է վերջինիս սահմանային Մուծածիր երկի-

ը, յաղթում նրա թագաւոր Ուրզանային եւ սպանելով ու գերելով անհամար բնակչութիւն՝ միաժամանակ բռնագրաւում է մեծ աւար, որի թւում եւ Ուրարտուի Խալդի աստծու եւ Մուծածիրի Բագմաշտու (Բագբարտու) աստուածուհու, որը Խալդիի կինն էր, կուռքերը։ Ռուսա Ա.ը, լսելով Մուծածիրի անկման եւ իր աստծոյ՝ Խալդիի գերութեան մասին, ինքնասպան է լինում[13]։

Վերը յիշուած Ուիշդիշ երկրի առաջնորդ Բագդատտիին հիմք ընդունելով՝ Բագրատունեաց նախարարական տոհմին Գրիգոր Ղափանցեանի կողմից տրուել է մանալական ծագում[14]։

Մեր կարծիքով դա թիւրիմացութիւն է, որ առաջ է եկել ասորեստանեան աղբիւրներում նշուած այն տեղեկութիւնից, որ Ուիշդիշը եղել է Մանայի մի երկրամասը, իսկ Բագդատտիի ժամանակ մտնում էր Ուրարտուին դաշնակից երկրների մէջ։

Հարցի ուսումնասիրութիւնը մեզ բերեց այն համոզման, որ Ուիշդիշ երկիրը իրեն յարող տարածքների հետ միասին մի էթնոգօտի էր հանդիսանում եւ միայն այն հանգամանքը, որ այն Մանայի մաս է կազմել, չի կարող փաստարկ հանդիսանալ Բագդատտիի ծագման հարցը որոշելիս։

Արդեո՞ք կարելի է Ուիշդիշ երկրի Բագդատտիին կապել Բագրատունեաց նախարարական տոհմի հետ եւ նրան ընդունել որպէս տոհմի նահապետ եւ անուանադիր։ Աղբիւրների ընձեռած հնարաւորութիւնները դրական պատասխան են տալիս այս հարցին։

Մինչ մեր հարցադրման անհրաժեշտ ապացոյցներին անցնելը, կարեւոր ենք համարում անդրադառնալ Ուիշդիշ երկրի տեղադրութեան հարցին, քանի որ այն ելակէտ կը հանդիսանայ Բագրատունեաց տոհմի ծագման հետ կապուած միքանի էական հանգամանքների լուծմանը։

Ուիշդիշ երկրի տեղադրութեան վերաբերեալ պատմաբաններրի մօտ երկու տեսակէտ գոյութիւն ունի։ Մեծամասնութիւնը գտնում է, որ Ուիշդիշը գտնուել է Ուրմիա լճի արեւելեան կողմում, իսկ նրա Ուաուշ լեռը ներկայիս Սոհունդ լեռն է[15]։ Ի. Գրանտովսկին կարծիք է յայտնել նաեւ, ըստ որի Ուաուշ լեռը հնարաւոր է լինի ո՛չ թէ Սոհենդը, այլ՝ նրանից հարաւ գտնուող Կարա-կայա լեռը (Մարաղայից հարաւ)[16]։

Ի տարբերութիւն գիտնականների այս խմբի՝ Ուիշդիշ երկրի տեղադրութեան հարցում այլ կարծիքի են Նիկողայոս Ադոնցը եւ Յակոբ Մանանդեանը։ Ըստ Ադոնցի, Ուիշդիշ երկիրը գտնուել է Ուրմիա լճի հարաւ-արեւմուտքում՝ Զաղաթու գետի գետաբերանից մինչեւ այժմեան Ուշնուէ քաղաքը ընկած շրջանում, իսկ հիւ-

սիսում այն տարածուել է մինչեւ յետագայի Մեծ Հայքի Պարսկահայք նահանգի Մարի գաւառը ներառեալ եւ շրջակայ տարածքները[17]։ Մանանդեանը ամբողջութեամբ ընդունում է Ադոնցի կողմից Ուիշդիշ երկրի տեղադրութեան վերաբերեալ արտայայտուած տեսակէտը[18]։

Մեր կարծիքով Ադոնցի եւ Մանանդեանի արտայայտած տեսակէտերը առաւել ընդունելի են, քանի որ Ուիշդիշ երկրի տեղադրութիւնը հաւանական է տեսնել Ուրարտուին, Մանային եւ Ասորեստանին առաւել մօտ շրջաններում եւ նաեւ պատմութեան տարբեր ժամանակաշրջաններից մինչեւ մեր օրերը հասած ուսումնասիրուող տարածաշրջանի այն տեղանուններից եւնելով, որոնք ծագում են հին դարերից եւ շատ դէպքերում զուգահեռներ ունեն իրենց նախնական (նաեւ վերաբերող Ուիշդիշ երկրի եւ յարակից շրջանների տեղանուններին) ձեւերին հետ։ Պակաս կարեւոր չէ նաեւ Սարգոն Բ.ին մ.թ.ա. 714ի արշաւանքի երթուղու ուսումնասիրումը, որի քննութիւնը մեզ տրամադրում է խօսել յօգուտ Ադոնցի եւ Մանանդեանի արտայայտած կարծիքի։ Ինչպէս եւ Ադոնցն է նկատել, Սարգոն Բ.ը Ուիշդիշից յետոյ անցնում է Սուբի երկրով. ապա յիշատակւում է Զարանդա երկիրը։ Այս երկու երկրները համապատասխանում են Պարսկահայք նահանգի Թրաբի, Ալլի (Կուռիճան), Տամբէթ, Զարեհաւան, Զարաւանդ եւ Հեր գաւառներին։ Առաջին երեքը կազմել են Սուբի երկիրը։ Մեր համոզմամբ Տամբէթ անունը ծագում է հենց Սուբիից, իսկ մնացած երեքը նոյն Զարաւանդն է, որ պահպանուել է Զարաւանդ գաւառի անուան մէջ։

Այստեղ կարեւոր ենք համարում անդրադառնալ Սուբի անուանը, քանի որ այն կարեւոր նշանակութիւն ունի հարցի ուսումնասիրութեան համար։ Նախ պէտք է նշել, որ Սարգոն Բ.ը՝ իր յայտնի արշաւանքը սկսելիս, անցնելով Վերին եւ Ներքին Զաբ գետերը, Սումբի անուամբ մարզում զօրահանդէս է կազմակերպում։ Տուեալ Սումբիի վայրի ընտրութիւնը իրենից դժուարութիւն չի ներակայացնում, քանի որ Սարգոնի արձանագրութիւնը մեզ յստակ պատկերացում է տալիս նրա գտնուելու վայրի մասին, այն է Կուլլար լերան շրջանում, որի անունը[19] նոյնութեամբ պահպանուել է մինչեւ մեր օրերը։ Ըստ Ադոնցի[20], վերոյիշեալ Սուբի եւ Սումբի անունները նոյնն են եւ, ինչպէս շատ դիպուկ ձեւով նկատում է նա, Սուբին կապւում է յոյն աշխարհագրագէտ եւ պատմաբան Ստրաբոնի յիշատակած Συμβάκη շրջանի հետ, որը հռոմէական եռապետ Մարկոս Անտոնիոսը մ.թ.ա. 33ին զիջեց Ատրպատականի թագաւորին, քանզի այն խլուել էր հայերի կողմից

մեդացիներից[20]։ Եթէ Սուբիի անունը պահպանուել էր Συμβάκη անուան մէջ, ապա Սումբիի անունը պահպանուել է մ.թ. Բ. դարի յոյն-եգիպտացի հեղինակ Պտղոմէոսի, Աշխարհագրութիւնից յայտնի Σαμβαται ἔθνοσի անուան մէջ[21], որի տարածքը գտնուել է Հայաստանի ծայր հարաւում եւ Սուրէն Երեմեանի կազմած մ.թ. Դ. դարի Մեծ Հայքի քարտէզում նշուած է լեռագալի Մահկերտ-տուն գաւառում, որը Կուլլարից գտնւում է ոչ շատ հեռու եւ ամենայն հաւանականութեամբ Սարգոնի ժամանակ մի ընդհանրութիւն է կազմել։ Մեր խորին համոզմամբ՝ Սուբիի (Սումբակէ) անունը պահպանուել է Տամբէթ (Տամբէր) գաւառի անուան մէջ[22] եւ ընդհանուր առմամբ այն, ինչպէս նաեւ Սումբիի (ազգն Սամբատայ) անունը ծագում են տոհմական Սմբատ անունից։

Սուբիի եւ Սումբիի երկրների հեռաւորութիւնը նոյնպէս նշանակութիւն չունի, քանի որ նրանց միջեւ ընկած է այնպիսի մի երկրամաս, որը ուղղակի ձեւով նոյնպէս կապւում է Բագրատունեաց նախարարական տոհմի հետ։ Դա Ուիշդիշ երկիրն է, որը, ինչպէս ասուեց, տարածւում էր Ուրմիա լճի հարաւ-արեւմուտքում՝ մինչեւ յայտնի Զարասպ լեռը ընկած տարածքներում, եւ որը, ինչպէս այժմ ցոյց կը տրուի, հանդիսանում էր հենց նոյն Բակտրիա երկիրը, որտեղից ծագում են եւ Երուանդունիները։ Ուիշդիշ երկիրը, ինչպէս ցոյց է տուել Յովհաննէս Կարագեոզեանը[23], իր անուամբ համապատասխանում է Բագիստան անուանը։ Դա բացատրւում է նրանով, որ Ուիշդիշը, որը ասորեստանեան սկզբնաղբիւրներով վկայուած գրելաձեւն է, ուրարտական աղբիւրներում միշտ հանդիպում է Ուգիշտի ձեւով, որը ոչ այլ ինչ է, եթէ ոչ Բագիստան անունը (Ուիշդիշ-Ուգիշտի-Վուգիստան-Բագիստան)։ Բագիստան, եւ որ աւելի ճիշդ է, Բագաստան անունը կազմուած է իրանական «baga» -- աստուած արմատից եւ նշանակում է աստծոյ երկիր։ Նոյն այս բացատրութիւնն է ստանում նաեւ Բակտրիա (Բակտրա) անուանումը, ընդ որում՝ երբ հաշուի ենք առնում այն հանգամանքը, որ Զենդ-Աւեստայում Բակտրիա երկիրը հանդիպում է նաեւ Բագդի անուամբ[24]։ Համոզուած կարելի է նշել նաեւ յոյն պատմահայր Հերոդոտոսի այն տեղեկութիւնը, ըստ որի «Պակտիւիկէից, արմէններից եւ հարեւաններից մինչեւ Եւքսինեանը ստացւում էր չորս հարիւր տաղանդ. սա տասներեքերորդ նահանգն էր»[25]։ Տուեալ դէպքում Աքեմենեան պետութեան տասներեքերորդ նահանգի մաս կազմող Պակտիւիկէն (Πακτυΐκη) նոյն Բակտրիա (Բագաստան, Ուգիշտի) երկիրն է եւ քանի որ մ.թ.ա. Ե. դարում՝ Հերոդոտոսի ժամանակ, Հայաստանում իշխա-

նութիւնը գտնւում էր Երուանդունիների ձեռքին, որոնք, ինչպէս տեսանք, ծագում են Բակտրիա (Պակտիւիկէ) երկրից, ապա այժմ առաւել համոզիչ է թւում, թէ ինչու Պակտիւիկէն եւ արմէնների երկիրը մէկ նահանգ էին կազմում։

Վերը նշուած փաստերը առաւել համոզիչ են դառնում, երբ մենք ուշադրութիւն ենք դարձնում նաեւ այն հանգամանքին, որ Բագրատունիների տոհմանուան «baga» արմատը տուեալ տարածաշրջանում հանդիպում է ոչ մէկ անգամ եւ, ինչպէս տուեալ հանգամանքը հաշուի առնելով կարելի է ենթադրել, իր նշանակութեամբ բաւականին մեծ դեր է ունեցել իր տարածման ամբողջ արեալում[26]։

Մ.թ.ա. 716 եւ 715ի տակ ասորեստանեան աղբիւրներից մեզ յայտնի է Բիթ-Բագայ ամրոցի մասին[27]։ Այն, մեր կարծիքով, նոյնանում է մ.թ. Զ. դարի ասորի մատենագիր Մշիխա Զեխայի յիշատակած Բէյթ-Բագաշի հետ[28]։ Ճիշդ է, Մշիխա Զեխան Բէյթ-Բագաշի մասին խօսում է որպէս Ադիաբէնի միտրոպոլութեան թեմերից մէկի մասին, սակայն կարծում ենք, որ այդ թեմի անունը կարող էր ծագել միայն համանուն երկրամասի կամ բնակավայրի անունից, որն էլ հենց ասորեստանեան աղբիւրների յիշատակած Բիթ-Բագայը կարող է լինել։

Ադոնցը Բէյթ-Բագաշը տեղադրում է Մեծ Զաւ[29] գետի վրայ՝ Զեռանի եւ Դիզայի սահմաններում, Գեւեռ գաւառակի տեղում[30]։ Երեմեանի կազմած Մեծ Հայքի թագաւորութեան մ.թ. Դ. դարի քարտէզում Բէյթ-Բագաշը նշուած է Նոր-Շիրական բդեշխութեան Մահկերտ-տուն գաւառում, այժմեան Ռեւանդուզ քաղաքից քիչ հիւսիս ընկած տարածքում[31]։ Պարզ է դառնում, որ ըստ ուսումնասիրողների Բէյթ-Բագաշը (Բիթ-Բագայ) գտնուել է անցեալի Մուծածիր երկրի տարածքում, քանի որ Մուծածիրը ուսումնասիրողները տեղադրում են Մեծ Զաւ գետի ձախակողմեան շրջանում՝ ներկայիս Ռեւանդուզի, Զիբարի եւ Սիղեկանի շրջակայ տարածքներում[32]։

Ուշադրութեան են արժանի նաեւ ասորեստանեան աղբիւրներից մեզ հասած Բագ-Թեշուբ լրտեսի մասին տեղեկութիւնները[33]։ Վերջինս գործել է ասորեստանեան-ուրարտական սահմանային գօտում եւ անկասկած արտայայտում է այն իրողութիւնը, որ «baga» արմատը, ինչպէս Բագդատի անուան մէջ, իր կիրառութիւնն էր ստացել նաեւ անձնանուններում։ Այդ են վկայում նաեւ մ.թ.ա. 714ի տակ՝ Սարգոն Բ.ի կառավարման ժամանակաշրջանից մեզ հասած Զակրուտեի[34] քաղաքի կառավարիչ Բագպարնայի մասին տեղեկութիւնները։ Վերջինս, ճիշդ է, քիչ դուրս է մնում մեր

կողմից ուսումնասիրուող տարածաշրջանից, սակայն վկայութիւնն է այն փաստի, որ «baga» արմատը, յանձինս իր կրողների, արդէն մ.թ.ա. Ը. դարում դուրս էր եկել իր տեղական նշանակութիւնից եւ հաստատուն քայլերով տարածւում էր շրջակայ երկրներում։

Վերջապէս պէտք է նշել Մուծածիրի (Արդինի) Բագբարտու (Բագմաշտու) աստուածուհուն, որը ուրարտական գլխաւոր աստուած Խալդիի կինն էր եւ, ըստ ուսումնասիրողների, հովանաւորում էր պտղաբերութիւնը, արհեստներն ու արուեստները[35]։ Այս աստուածուհու հետ է կապուած Մուծածիր երկրի ամբողջ փառքը, որը իր վախճանը գտաւ Սարգոն Բ.ի՝ մ.թ.ա. 714ի յայտնի արշաւանքից յետոյ։ Ինչպէս տեսանք, Սարգոնը կոնկրէտ Ուրարտուի դէմ իր ռազմական գործողութիւններն սկսեց Ուիշդիշից (Բագաստան)՝ Ուաուշ լերան մօտ Ռուսա Ա.ի եւ դաշնակից զօրքերի դէմ տուած ճակատամարտով։ Հետաքրքիր է, որ արշաւանքը նա աւարտեց Մուծածիրում, որը, ինչպէս կը տեսնենք, հանդիսանում էր այն կոմպակտ տարածաշրջանի (Բակտրիա-Բագաստան) մի մասը, որտեղից սկսել էր նա իր արշաւանքը։ Եւ պէտք է ասել, որ ամէնամեծ աւերածութիւնը նա գործեց Մուծածիրում՝ աւարի առնելով եւ հողին հաւասարեցնելով Մուծածիր քաղաքը, նրա Խալդի աստծոյ տաճարը, գերութեան մատնելով Խալդի աստծոյ եւ Բագբարտու (Բագմաշտու) աստուածուհու արձանները։ Ռուսա Ա.ը հենց Մուծածիրի անկման պատճառով ինքնասպանութեան դիմեց։ Հարցի ուսումնասիրութեան համար, Մուծածիր երկրի նշանակութիւնը նաեւ այն է որ նրա Մուծածիր քաղաքը հանդիսանում էր ուրարտական թագաւորների թագադրման վայրը[36], որն անմիջական ուղղակի կապի մէջ է գտնւում Բագրատունեաց նախարարական տոհմին ենթակայ թագադիր-թագակալ պաշտօնի հետ եւ ցոյց է տալիս այդ տոհմի նշանակութիւնը հենց վաղ հայկական պետութեան պատմութեան համար։

Այստեղ, բացի Երուանդունիների բակտրիական ծագման վերաբերեալ տեղեկութեան, կարեւոր ենք համարում անդրադառնալ նաեւ Պլինիոս Աւագի յիշատակած Արոանդէս ցեղի վերաբերեալ փաստին, որը, ինչպէս նշուել է բոլոր ուսումնասիրողների կողմից, ուղղակի կապւում է Երուանդունեաց տոհմին։ Պլինիոսի վկայութեամբ[37] Aroandes (Մանանդեանի մօտ գրուած է Orontes[38]) ցեղը բնակւում էր Գաւգամելա քաղաքից արեւելք։ Ուսումնասիրողների կողմից այս ցեղի բնակութեան վայրի հարցում տարակարծութիւն գրեթէ չկայ։ Հենրի Ռաուլինսոնի կարծիքով Օրոնտների անունը պահպանուած է այժմեան Ռեւանդուզ տեղանուան մէջ (Օրոնտ→ Երուենտ→ Ռեուենտ)[39]։ Ռաուլինսոնի առաջ քաշած տեսակէտը

յետագայում ընդունել են գրեթէ բոլորը։ Էլչիբեկեանը Aroandes-ների ցեղի բնակութեան շրջանը համարում է Արդինի-Մուծածիրը , որը ընդհանուր առմամբ համընկնում է Ռաուլինսոնի տեսակէտին։

Ինչպէս տեսանք, բոլոր փաստերը վկայում են Երուանդունեաց եւ Բագրատունեաց տոհմերի նոյն տարածաշրջանային ծագման մասին։ Բացի յատուկ անունների էթնիկ պատկանելիութեան նոյնութիւնից, այս երկու տոհմերի ազգակից լինելու հանգամանքը ապացուցւում է նաեւ հայոց մատենագիրների տեղեկութիւններով, որոնք՝ լինելով իրականութեան, աւանդոյթի եւ առասպելի սահմանագծին, առանձին դէպքերում պահպանել են պատմական փաստերի առողջ հատիկներ։ Դա երեւում է եւ Անանունի արդէն մէջբերուած հատուածից ու նաեւ Խորենացու, Թովմա Արծրունու եւ այլ մատենագիրների տեղեկութիւններից։ Այս կարգի տեղեկութիւնների մէջ իրենց ուրոյն տեղն են զբաղեցնում նաեւ Հայաստան այցելած մ.թ.ա. Ե.-Դ. դարերի յոյն հեղինակ Քսենոփոնի Կիւրոպեդիայում պահպանուած՝ մ.թ.ա. Զ. դարի երկրորդ կէսին վերաբերող տեղեկութիւնները, որոնցից մէկը կապուած է տուեալ ժամանակաշրջանում Հայաստանում իշխող արքայատոհմին։ Այդ արքայատոհմից մեզ հասած երկու անձնանուններն էլ՝ Տիգրանը եւ իր եղբայր Սաբարիսը անմիջականօրէն կապւում են հայոց մատենագիրների յիշատակած Տիգրան Երուանդեանին (Խորենացի, եւն.) եւ Փառնաւազի հայր Շաւարշին (Սեբէոսին կից Անանուն)։ Ընդ որում՝ վերջին դէպքում Սաբարիսը (Շաւարշ) հաւանաբար հանդիսանում է Փառնաւազի ազգականը (ամենայն հաւանականութեամբ՝ եղբօրորդին), քանզի Փառնաւազը գործել է Բաբելոնի Նաբուգոդոնոսոր Բ. թագաւորի ժամանակաշրջանում։ Հայոց մէջ (եւ ոչ միայն) ընդունուած աւանդոյթի համաձայն՝ տուեալ դէպքում Տիգրանի եղբայր Շաւարշը իր անունը ստացել է իր պապի անունից։ Բացի արքայատոհմի երկու անձանց անունից՝ Քսենոփոնը մեզ է աւանդում եւս մէկ անուն։ Դա հայոց[41] քանակի հետեւազօրի հրամանատար Էմբասի (Ἔμβασ) անունն է[42]։ Հայոց պատմագիտութեան մէջ Էմբասին անդրադարձած միքանի ուսումնասիրողներից միայն Գրիգոր Խալաթեանցն է նկատել, որ այդ անունը նման է Սմբատ անուանը[43]։ Մեր կարծիքով, այդ անուան առաջին տառի վերափոխման պատճառը գրիչների անփութութիւնն է։ Գրիչները շատ հեշտութեամբ[44] կարող էին Σ եւ Ε տառերը նմանութեան պատճառով շփոթել։ Համոզուած կարելի է պնդել, որ Խորենացու յիշատակած Բագրատունեաց տոհմի հիմնադիր հրեայ Շամբաթը[45] իր հիմքում պարունակում է այս հետե-

ւազօրի հրամանատար Սմբատին (Էմբաս) եւ, որ բնորոշ է Խորենացու աղբիւրներից օգտուելու մեթոդին, տոհմին հրէական ծագման փաստը զուտ ժողովրդական եւ տոհմական աւանդութեան արդիւնք պէտք է համարել։

Այսպիսով, Քսենոփոնի յիշատակած բոլոր երեք անձերն էլ կապւում են Երուանդունեաց-Բագրատունեաց տոհմերին, որը եւս ապացուցում է, որ մ.թ.ա. Ը. դարում Հայկական Լեռնաշխարհի հարաւում սկիզբ առած այս երկու ազգակից տոհմերն արդէն մ.թ.ա. Զ. դարում ամբողջութեամբ իրենց ձեռքում էին կենտրոնացրել քաղաքական եւ ռազմական իշխանութիւնը։ Եւ բոլոր հիմքերը կան պնդելու, որ այս ազգակից երկու տոհմերի համատեղ գինակցութիւնը հայ ժողովրդի կեանքում շարունակուեց բաւական երկար ժամանակահատուածում եւ իր նշանակութեամբ ունեցաւ նաեւ այն դերը, որ հիմք հանդիսացաւ Հայաստանի՝ որպէս դասական ազնուականական երկրի ձեւաւորմանը։ Այդ համատեղ գինակցութեան լաւագոյն վկայութիւնն է Արտաշէս Ա.ի (մ.թ.ա. 189-161) Զանգեզուրի արամէերէն արձանագրութիւնը, որտեղ ասւած է. «Արտաշէս թագաւոր, Երուանդունի, Բարեպաշտ, որդի Զարեհի եւ Նեկփարայ, թագադիր, որդի Ախշահրսարտի» ([']rtḥš[sy] mlk 'rwnd [qn (?)] ṭb br zryḥr wnqpr qṭr br 'ḥštrsrt) : Կարեւոր ենք համարում այստեղ միայն մէկ ճշգրտում կատարել։ Եթէ Արտաշէս արքան եւ իր հայր Զարեհը արձանագրութիւնում ներկայանում են իրենց բուն անձնանուններով, ապա նոյնը չի կարելի ասել երկու Բագրատունի իշխանների մասին։ Այստեղ երկու Բագրատունիներն էլ կրում են ոչ թէ իրենց բուն անձնանունները, ինչպէս սխալմամբ գտնում են ուսումնասիրողները, այլ նրանք ներկայացւած են միմիայն մակդիրներով, որի պատճառը վերջիններիս հոգեւոր գործունէութեան (քրմութեան եւ թագադրութեան պաշտօններից ելնելով) մէջ է։ Նեկփարը, ինչպէս Անահիտ Փերիխանեանն է նշում[46], իր բացատրութիւնն է ստանում որպէս «օժտուած ազնուափայլ մեծութեամբ», իսկ Ախշահրսարտ մակդիրը, մեր կարծիքով, ծագում է իրանական xšaϑra (աշխարհ) եւ srūta[47] (հռչակաւոր) բառերից։

Արձանագրութեան կարեւորութիւնն այն է, որ այստեղ տրւում է Արտաշէսի հօր անունը։ Զարեհ անունը (Zariā[48] - ոսկեգոյն կրակով օժտուած) եւ ընդհանրապէս զար (ոսկի) արմատը այս երկու ազգակից տոհմերի համար ունեցել են բացառիկ նշանակութիւն։ Զարեհ անունն է կրում Անանունի բերած հայոց արքայատոհմի, որն, անկասկած, Երուանդունեաց արքայատոհմն է, առաջին արքայիկը (կառավարման սկիզբը ըստ Անանունի՝ մ.թ.ա.

680)։ Այդ անունն են կրում Արտաշէս Ա.ի հայրը եւ որդին, Մովքի Երուանդունի թագաւորը, Տիգրան Բ. Մեծի (մ.թ.ա. 95-55) որդին։ Զար արմատով են կազմուած երկու տոհմերի հետ անմիջական առընչութիւն ունեցող այնպիսի տեղանուններ, ինչպիսիք են Զարեւանդը, Զարեհաւանը, Զարիշատը։ Ընդ որում, ասորեստանեան աղբիւրների Զարանդան (Զարեւանդի եւ Զարեհաւանի տարածքում), Խորենացու իսկ վկայութեամբ , անմիջականօրէն կապւում է մեր կողմից արդէն մատնանշուած Բակտրիա (Բագաստան) երկրի հետ եւ ցոյց է տալիս Երուանդունիների եւ Բագրատունիների՝ դէպի հայոց միջնաշխարհ տարածուելու երթուղին։ Եվ վերջապէս պէտք է նշել Զարասպ լեռը, որը, համոզուած ենք, նոյն Ուառուշ լեռն է ։ Այս Ուառուշ լերան շուրջբոլորն է տարածւում Բակտրիա (Բագաստան) երկիրը, որն առանձին ժամանակահատուածներում, կապուած քաղաքական տեղաշարժերի հետ, բաժանուել է միքանի մասերի (Բագաստան-Ուգիշտի, Սումբի, Սուբի, Մուծածիր), մէկ ամբողջութեամբ մաս է կազմել Ուրարտուին, կամ եղել է բաժանուած Ուրարտուի եւ Մանայի միջեւ, կամ էլ թիրախ է դարձել Ասորեստանի արքաների արշաւանքների։ Ուառուշի (Զարասպ) եւ Բակտրիայի (Բագաստան) անմիջական կապը երեւում է նաեւ Միջին Ասիայի Բակտրիայից, որը, ինչպէս նշուել է արդէն, կրում է նաեւ Զարիասպա անունը։ Ըստ երեւոյթին, Զարասպ (Ուառուշ) լեռը շրջակայ ցեղերի, յատկապէս՝ Երուանդունեաց եւ Բագրատունեաց տոհմերի եւ ընդհանրապէս Բագաստան երկրի համար հանդիսացել է սուրբ լեռ ։ Այդ են վկայում տուեալ լերան վրայ տեղի ունեցած մաննայական Ազա թագաւորի սպանութիւնը Բագդատտիի կողմից։ Այս Բագդատտիի սպանութիւնը Սարգոն Բ.ի կողմից նոյն լերան վրայ։ Նոյն լերան վրայ տեղի ունեցած ճակատամարտը Սարգոն Բ.ի բանակի եւ Ռուսա Ա.ի ու դաշնակից զօրքերի միջեւ, որտեղ ուրարտական կոալիցիան մեծ պարտութիւն կրեց։ Մեր կարծիքով, ասորեստանեան աղբիւրների այն տեղեկութիւնը, որ երբ Սարգոն Բ.ի զօրքը մտաւ Մուծածիր, վերջինիս թագաւոր Ուրզանան փախաւ եւ բարձրացաւ իր լեռը , նոյնպէս վերաբերում է Զարասպին։ Եւ այս ամէնը ընդամէնը կատարուեց երեք տարուայ ընթացքում՝ մ.թ.ա. 716-714ին։

Այս երկու տոհմերի՝ դէպի Հայաստանի միջնաշխարհը տարածուելու երթուղին նոյնպէս բաւականին յաջող ձեւով վերականգնւում է։ Անանունի վկայած առաջին Երուանդունի թագաւորի (արքայիկ)՝ Զարեհի կառավարման շրջանում (սկսած մ.թ.ա. 680ին), երկու ազգակից տոհմերի կենսոլորտն էր դարձել արդէն նշուած Զարանդա երկիրը։ Նրան յաջորդած Արմոգ եւ Սարհանգ

արքայիկներից յետոյ՝ Շաւարշի կառավարման շրջանում, երկու տոհմերը իրենց ազդեցութեանն են ենթարկել Վասպուրականի Արտազ գաւառի տեղում ընկած տարածքները, որի ապացոյցն է Արտազի Շաւարշան քաղաքի՝ Ֆադէոս առաքեալի քարոզչութեան յայտնի կենտրոնի անուանումը[53]։ Շաւարշի յաջորդած Փառնաւազի կառավարման շրջանում (մ.թ.ա. 590-580ականներ) երկու տոհմերն իրենց են ենթարկել Մասիս լերան շուրջ ընկած տարածքները (Փառականի դաշտ, Փառախոտ), ինչպէս նաեւ Նախճաւանի շրջանում անցնելով Արաքս գետը՝ հասել են մինչեւ պատմական Գողթն[54] գաւառ (Փառական բերդ)։ Փառնաւազին յաջորդած Երուանդի կառավարման շրջանում այս տոհմերը իրենց ազդեցութիւնն են տարածել ուրարտական պետութեան կենտրոնական շրջանների վրայ (Երուանդական (Վան) քաղաքը, Երուանդունիք գաւառ) եւ հաւանաբար այս Երուանդ արքայի ձեռքով է վերջնականապէս պատմութեան թատերաբեմից դուրս եկել ուրարտական թագաւորութիւնը, եւ Երուանդը՝ ձեռք բերելով լիարժէք ինքնիշխանութիւն, հիմք է դրել իր անուամբ արքայատոհմին։ Երուանդին յաջորդած Տիգրանի կառավարման շրջանը (մ.թ.ա. 550-530ականներ) պէտք է համարել Հայաստանի փառքի եւ հզօրութեան ժամանակաշրջան, քանզի Տիգրանի եւ Աքեմենեան Պարսկաստանի հիմնադիր Կիւրոս Մեծի (մ.թ.ա. 550-530) զինակցութիւնը բերեց երկու պետութիւնների Առաջաւոր Ասիայում գերիշխանութեան հաստատմանը։ Մեր կարծիքով, Խորենացու այն վկայութիւնը, որ Տիգրան[55] Երուանդեանը իր անունով կառուցեց Տիգրանակերտ քաղաքը, նոյնպէս չի հակասում իրականութեանը եւ չպէտք է շփոթել Տիգրան Մեծի կառուցած Տիգրանակերտ մայրաքաղաքի հետ։ Տիգրան Երուանդեանի Տիգրանակերտը, հնարաւոր է, նոյնանում է Դարեհ Ա.ի Բեհիսթունեան արձանագրութեան Տիգրա[56] վայրի հետ, որտեղ ճակատամարտ տեղի ունեցաւ ապստամբած հայոց եւ պարսից բանակների միջեւ։ Միաժամանակ հնարաւոր ենք համարում նոյնացնել վերը նշուած երկու բանակավայրերը (Խորենացու Տիգրանակերտն ու Դարեհ Ա.ի Բեհիսթունեան արձանագրութեան Տիգրան) Պտղոմէոսի յիշատակած Tigranoama (Tigranuana) բանակավայրին հետ, որը գտնւում էր Արտեմիտայից (Վասպուրականի Հայոց Ձոր գաւառում) դէպի հարաւ-արեւելք՝ մինչեւ հայկական Զագրոսի (Կոհ-ի-Նիհորական լեռներ) ու Նպատական լեռների միանալու շրջանը ընկած տարածքներում եւ տեղորոշւում է մօտաւորապէս Կորճայքի Ճահուկ գաւառի շրջանում։ Այսպիսով, հիմք ունենալով այն տեղանունները, որոնք ուղղակի ձեւով եւ անմիջականօրէն կապւում են Եր-

ւանդունեաց եւ Բագրատունեաց տոհմերին՝ հնարաւորութիւն է ստեղծւում յստակ որոշել այն երթուղին, որը անցան այս երկու տոհմերը իրենց նախնական պատմութեան ընթացքում։

Միաժամանակ պէտք է նշել այն հանգամանքը, որ Բագաստան (Բակտրիա) երկիրը դէպի հիւսիս եւ հիւսիս-արեւմուտք չփման մէջ գտնուելով ամբողջութեամբ հայկական էթնիկ աշխարհի հետ, իսկ դէպի հարաւ եւ հարաւ-արեւելք չփման մէջ գտնուելով ամբողջութեամբ իրանական էթնիկ աշխարհի հետ, կրողն էր երկու էթնիկ խմբերի ազդեցութեան։ Հետեւաբար եւ հայ ժողովրդի կեանքում անգնահատելի դեր կատարած նշուած երկու տոհմերը, լինելով իրենց բնօրրանի՝ Բակտրիա-Բագաստանեան քաղաքակրթութեան կրողները, որն առանձնանում էր առաջին հերթին ուրոյն կրօնական համակարգով եւ նաեւ ձեւաւորուած տոհմական կարգերի առկայութեամբ, նպաստեցին եւ հող նախապատրաստեցին այն կարգերի ձեւաւորման համար, որոնք կոչւում են նախարարութիւններ։ Նախարարութիւնների լաւագոյն մասնագէտի՝ Ադոնցի դիպուկ բնորոշումը, թէ՝ Բագրատունեաց տոհմը «առաջ է եկել հայ-իրանական էթնիկական հողի վրայ» ամբողջութեամբ վերաբերում է նաեւ Երուանդունիներին եւ հանդիսանում է մեր այս աշխատութեան վերջնական արդիւնքը, որին եւ մենք յանգեցինք այս քննութեան ընթացքում։

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] Գէորգ Տիրացեան, «Երուանդունիները Հայաստանում», *ՀՍՍՀ ԳԱ Տեղեկագիր հասարակական գիտութիւններ*, 1958, թիւ 6, էջ 69-70. նոյնի՝ «Անաբասիը՝ եւ Հայաստանը», տե՛ս՝ Քսենոփոն, *Անաբասիս*, Երեւան, 1970, էջ 221-241. *Սիմոն Կրկեաշարեան*, «Երուանդունի արքայատոհմը Հայաստանում», *Պատմա-բանասիրական Հանդէս*, 1973, թիւ 4, էջ 179-186. *Ժամենա Էլչիբեկեան*, «Երուանդունիների ծագման հարցի շուրջը», *Պատմա-բանասիրական Հանդէս*, 1971, թիւ 2, էջ 107-115. *Սուրէն Երեմեան*, «Հայկական առաջին պետական կազմաւորումները (VII-VI դդ. մ.թ.ա.)», *Պատմա-բանասիրական Հանդէս*, 1968, թիւ 3, էջ 104-113. *Խ. Բաբայեան*, *Բագրատունեաց նախարարութիւնը*, Թիֆլիս, 1908, էջ 12-15. *Նիկողայոս Ադոնց*, *Հայաստանը Յուստինիանոսի դարաշրջանում*, Երեւան, 1987, էջ 433, 458-459. *Ա. Շահնազարեան*, «Բագրատունեաց նախարարական տոհմի ծագումը», *Հայաստանի պատմութեան պետական թանգարանի աշխատութիւններ*, հ. 1, Երեւան, 1948, էջ 167-212. *Կիրիլ Թումանով*, *Հայաստանի Որոնդեանները*, Վիեննա, 1970. *Ռաֆայէլ Մաթեւոսեան*, *Բագրատունիներ*, Երեւան, 1997, էջ 55-65, եւն.։

[2] Էլչիբեկեան, էջ 107-108։

[3] Գրիգոր Ղափանցեան, *Ուրարտուի պատմութիւնը*, Երեւան, 1940, էջ 203, 219, ծան. 1. Առոն Մ. Գարագաշեան, *Քննական պատմութիւն հայոց*, մասն Ա., Թիֆլիս, 1895, էջ 173. Հայկ Մելքոնեան, *Ազիաբէնի պետութիւնը եւ Հայաստանը*, Երեւան, 1980, էջ 129-134. Մաթեւոսեան, էջ 8-9, 65 եւն.։

[4] Էլչիբեկեան, էջ 108-115։

[5] Մովսէս Խորենացի, *Պատմութիւն Հայոց*, Երեւան, 1991, էջ 23 (գիրք Ա., գլ. գ.)։

[6] Նոյն, էջ 26։

[7] Ինչպէս եւ Էլչիբեկեանը, Երեմեանը նոյնպէս չատ մօտ է եղել իրական բացատրութեանը. տե՛ս՝ Երեմեան, էջ 112-113։ Նա նոյնպէս գտնում է, որ Երուանդունիների բակտրիական ծագումը առաջ է եկել «Զարասպ» անուան նոյնացման հողի վրայ, եւ որ այդ տոհմը ծագում է նշուած լերան շուրջ ընկած տարածքներից։ Բանն այն է, որ նրանք չեն կարողացել ենթադրել Բակտրիա անուամբ մէկ այլ երկրի գոյութեան մասին, որը կարող էր գտնուել Զարասպ լերան շրջանում։

[8] G. Khalatiants, *Armianskii epos* [Հայկական դիւցազնավէպ], Ա. մաս, Մոսկուա, 1896, էջ 162-163. Կարապետ Բասմաջեան, *Խկական պատմութիւն հայոց*, Կ. Պոլիս, 1914, էջ 88-89. Լէօ, «Հայոց պատմութիւն», *Երկերի ժողովածու* 10 հատորով, հ. 2, Երեւան, 1967, էջ 490-491. Նիկողայոս Ադոնց, «Բագրատունեաց փառքը», *Պատմական ուսումնասիրութիւններ*, Փարիզ, 1948, էջ 109։

[9] *Պատմութիւն Սեբէոսի*, աշխատասիրութեամբ Գ. Վ. Աբգարեանի, Երեւան, 1979, էջ 51 (գլ. Ա.)։

[10] Մանուկ Աբեղեան, «Հայ ժողովրդական առասպելները Մ. Խորենացու Հայոց պատմութեան մէջ», *Երկեր*, հ. Ը., Երեւան, 1985, էջ 200-207։

[11] Խորենացու Ա. գրքի իբ. գլուխը ձեռագրերում մեզ է ներկայանում նախադասութիւնների տարբեր դասաւորութեամբ։ Մեզ հետաքրքրող հատուածը գրուած է հետեւեալ կերպ. «Ցիշեսցուք զանուանս զայսոսիկ։ Հրաչեայ. սա կոչի վասն առաւել պայծառերես եւ բոցակնագոյն իմն լինելոյ։ Առ սովաւ ասեն կեցեալ...», որը պէտք է արբագրուի հետեւեալ կերպ. «Ցիշեսցուք զանուանս զայսոսիկ։ Հրաչեայ. սա կոչի վասն առաւել պայծառերես եւ բոցակնագոյն իմն լինելոյ։ Փառնաւազ. առ սովաւ ասեն կեցեալ ...», Աբեղեան, էջ 204-205։

[12] Այն հանդիպում է նաեւ Մաննա ձեւով։ Ճիշդը Մանա ձեւն է։

[13] Igor M. Diakonov, "Assiro-vavilonskie istochniki po istorii Urartu" [Ասուրա-բաբելական սկզբնաղբիւրները Ուրարտուի պատմութեան մասին], *Vestnik Drevniêi Istorii*, 1951, No. 3, էջ 209-210. տես նաեւ Նիկողայոս Ադոնց, *Հայաստանի պատմութիւն*, Երեւան, 1972, էջ 101-102։

[14] Ղափանցեան, էջ 203, 219, ծան. 1։

[15] Boris B. Piotrovskii, *Istoriia i kultura Urartu* [Ուրարտուի պատմութիւնն ու մշակոյթը], Երեւան, 1944, էջ 103-128. I. M. Diakonov, *Istoriia Midii* [Մարաստանի պատմութիւնը], Մոսկուա-Լենինկրատ, 1956, էջ 216. N. V. Arutunian, *Toponomiki Urartu* [Ուրարտուի տեղանունները], Երեւան, 1985, էջ 197, եւն.։ Գրականութեան մէջ Սոհունդ լերան անուան հանդիպում ենք նաեւ Սոհենդ ձեւով։

[16] E. A. Grantovskii, *Ranniaia istoriia iranskikh plemen Perednei Azii* [Առաջաւոր Ասիոյ իրանական ցեղերի վաղ պատմութիւնը], Մոսկուա, 1970, էջ 274։

[17] *Ադոնց, Հայաստանի պատմութիւն*, էջ 108-109։

[18] *Յակոբ Մանանդեան*, "Marshruti pokhodov Salmanasara III i Sargona II protiv Urartu (v 857 i 713 gg. do n.e.)" [*Ուրարտուի դէմ Սալմանասար Գ.ի եւ Սարգոն Բ.ի արշաւանքների երթուղիները (մ.թ.ա. 857 եւ 713 թթ.)*], *Երկեր*, հ. Ե., *Երեւան*, 1984, էջ 469-471։

[19] *Ադոնց, Հայաստանի պատմութիւն*, էջ 110, ծան. 1։

[20] Strab. XI, էջ II։

[21] Ptol., VI, էջ 1, 2։

[22] *Մեր կարծիքով՝ նշուած անունների գլխաւոր տարբերիչ Ս եւ Տ հնչիւնների լծորդումը հետեւանք է հին պարսկերէնում օրինաչափութիւն համարուող* S > ʃ *անցման։ Այս մասին տե՛ս* E. A. Grantovskii, "O rasprostranenii iranskikh plemen na territorii Irana" [*Իրանի տարածքում իրանական ցեղերի տարածման մասին*], *Istoriia Iranskogo gosudarstva i kulturi* [*Իրանական պետութեան ու մշակոյթի պատմութիւն*], *Մոսկուա*, 1971, էջ 309-310։

[23] *Յովհաննէս Կարապետեան, Հայկական լեռնաշխարհը սեպագիր աղբիւրներում*, հ. I, *գիրք* 1, *Սեպագիր տեղանուններ, Երեւան*, 1998, էջ 307։

[24] *Drevnie avtori o Srednei Azii (VI v. do n.e.-III v. n.e.)* [*Հին հեղինակները Միջին Ասիայի մասին (մ.թ.ա. Դ. դար–մ.թ. Գ. դար)*], *Քրեստոմատիա խմբագրութեամբ Լ. Վ. Բաժենովի, Տաշկենդ*, 1940, էջ 18։

[25] *Հերոդոտոս, Պատմութիւն ինը գրքից, թարգմ. Սիմոն Կրկեաշարեանի, Երեւան*, 1986, էջ 197 (*Գիրք երրորդ*, 3)։

[26] *Հին պարսկական* «baga»*ն ունեցել է ընդհանուր «աստուած» նշանակութիւնը։ Այդ նոյն* «baga»*ն, սակայն, հին հնդկական միջավայրում հանդիսանում էր կամ առանձին աստծոյ յատուկ անուն, կամ մի շարք աստուածների տրուող մականուն։ Աւեստայում* «baga»*ն Միթրա (Միհր) աստծուն տրուող մականուն է (տե՛ս՝* Grantovskii, *Ranniaia*, էջ 156)։

[27] Grantovskii, *Ranniaia*, էջ 313։

[28] *Ասորական աղբիւրներ, Ա., թարգմանութիւն բնագրից, առաջաբան եւ ծանօթագրութիւններ Հ. Մելքոնեանի, Օտար աղբիւրները Հայաստանի եւ հայերի մասին*, 8, *Երեւան*, 1976, էջ 107։

[29] *Այն հանդիպում է նաեւ Մեծ Զաբ ձեւով։*

[30] *Ադոնց, Հայաստանը Յուստինիանոսի դարաշրջանում*, էջ 258։

[31] *Մեծ Հայքի թագաւորութիւնը մ.թ. IV դարում, քարտէզի հեղինակ՝ Ս. Տ. Երեմեան, Երեւան*, 1979։

[32] N. V. Arutunian, էջ 145 եւ 234-235։

[33] Grantovskii, *Ranniaia*, էջ 306։

[34] *Նոյն*, էջ 324։

[35] *Մաթեւոսեան*, էջ 7։

[36] I. M. Diakonov, *Presdistoriia armianskogo naroda* [*Հայ ժողովրդի նախապատմութիւնը*], *Երեւան*, 1968, էջ 140։

[37] Plin., *Nat. Hist.* VII, 1, էջ 18։

[38] Մանանդեան, «Պատմա-աշխարհագրական մանր հետազոտութիւններ», Երկեր, հ. Ե., Երեւան, էջ 308-309։

[39] Rawlinson, Journal of Royal Geographical Society, 1838, էջ 73։

[40] Էլչիբեկեան, էջ 114։

[41] Քսենոփոն, Կիւրոպեդիա, V, 3, էջ 38։

[42] G. Khalatiants, *Ocherki istorii Armenii v sviazi s obshchim khodm sobitii v Perednei Azii* [Հայաստանի պատմութեան ուրուագիծ, Առաջաւոր Ասիայում դէպքերի ընդհանուր ընթացքին առընթեր], Մոսկուա, 1910, էջ 79։

[43] Ինչ վերաբերում է Էմբաս անուան վերջաւորութեանը, ապա պէտք է ասել, որ Մօրիկ կայսեր յոյն կենսագիր, պատմիչ Սիմոկատէսի մօտ հայոց Սմբատ Բագրատունի իշխանի անունը գրուած է Symbace (տես Պատմութիւն Սեբէոսի, Երեւան, 1979, էջ 256, ծան. 262), որը ապացուցում է, որ ի տարբերութիւն Սմբատիոս կամ Սումբատէս վերափոխման օրինաչափ ձեւի՝ Սմբատ անուան վերափոխումը Սմբասի նոյնպէս գործածական է եղել։ Կարծում ենք, որ Կոստանդին Միրանաձնի (տե՛ս՝ Բիւզանդական աղբիւրներ, Բ., Կոստանդին Միրանաձին, Թարգմանութիւն բնագրից, առաջաբան եւ ծանօթագրութիւններ Հրաչ Բարթիկեանի, Օտար աղբիւրները Հայաստանի եւ հայերի մասին, Ե., Երեւան, 1970, էջ 81) լիշատակուած հագարացի Սամբասի անունը նոյնպէս վերը լիշուած վերափոխման օրինաչափութիւնների հետեւանք է։

[44] Խորենացի, Գիրք Ա.՝ գլ. իբ. էջ 68-69։

[45] A. G. Perikhanian, "Arameiskaia nadpis iz Zangezura" [Արամէերէն արձանագրութիւն Զանգեզուրից], Պատմա-բանասիրական Հանդէս, 1965, թիւ 4, էջ 108։

[46] Նոյն, էջ 110։

[47] Grantovskii, *Ranniaia*, էջ 325։

[48] Perikhanian, էջ 109։

[49] Խորենացի, Գիրք Ա., գլ. գ., էջ 22-27։

[50] Ադոնցը գտնում է, որ Ուաուշ լեռը ժամանակակից Ուշնուէից տասնհինգ կիլոմետր հեռաւորութեան վրայ գտնուող 2000 մետր բարձրութիւն ունեցող այն լեռն է, որի կողքով է անցնում Դերբենդի լեռնանցքը (Ադոնց, Հայաստանի պատմութիւն, էջ 108)։ Մանանդեանը, վկայակոչելով Հայր Ղեւոնդ Ալիշանի եւ Գ. Հոֆմանի արտայայտած տեսակէտերը, գտնում է, որ Զարասպ լեռը տեղորոշւում է Կելիշինի լեռնանցքի շրջանում (Մանանդեան, Երկեր, հտ. Ե., էջ 295-297)։ Ըստ Երեմեանի, այդ լեռը Կելիշինի լեռնանցքից հարաւ գտնուող այժմեան Սիահկուհ գագաթն է՝ 3497 մետր բարձրութեամբ (Երեմեան, էջ 113)։

[51] Զարասպ անունն իր բացատրութիւնն է ստանում որպէս «տակէ նժոյգ» եւ կապւում է ձիերի պաշտամունքի հետ։ Բագրատունիների կողմից ձիերի պաշտամունքի մէկ այլ վկայութիւն է նրանց տոհմական «սպիտակ» տիտղոսի անուանումը, որը քրիստոնէական շրջանում, իհարկէ, կորցրել էր իր նշանակութիւնը։ Ուաուշ անունը, ըստ Գրանտովսկու ստուգաբանութեան, ծագում է իրանական *Vahuš (լաւ, բարի) բառից (Grantovskii, *Ranniaia*, էջ 274), որը նոյնպէս կապւում է հեթանոսական պաշտամունքների հետ։

[52] Diakonov, "Assiro-vavilonskie istochniki", էջ 210։

[53] Եզնիկ քհնյ. Պետրոսեան, Հայ եկեղեցու պատմութիւն, մասն Ա., էջմիածին, 1990, էջ 11։

[54] Հայոց պատմագրութեան մէջ ապացուցուած է, որ Խորենացու մարական թագաւորութեան ժամանակաշրջանի հայ իշխողների ցուցակում պատմական են միայն երկուսը՝ Երուանդը եւ նրա որդի Տիգրանը (տես, օրինակ, Երեմեան, էջ 105)։ Համոզուած կարելի է նշել, որ Երուանդի կառավարման շրջանը հենց յաջորդում է Փառնաւազին։

[55] Խորենացի, Գիրք Ա., գլ. Լ., էջ 83։

[56] Հայ ժողովրդի պատմութեան քրեստոմատիա, հ. 1, Երեւան, 1981, էջ 155։

[57] Ադոնց, Հայաստանը Յուստինիանոսի դարաշրջանում, էջ 458։

ON THE ISSUE OF THE ORIGIN OF THE YERVANDUNIS AND THE BAGRATUNIS

(Summary)

SARO SAROYAN

The author delves into the controversial discussion on the origins of two Armenian royal dynasties, the Yervandunis (Orontids) and the Bagratunis (Bagratids). According to the primary sources, there are two apparently contradictory versions on the origins of the Yervandunis. Based on these different sources, some scholars consider the Yervandunis to be natives of Armenia; others, descendants of the Achaemenids or of a close associate of the Achaemenid King, Darius. Still other sources claim that the Yervandunis came from an area called Boriadjik in Pergamum, situated at the south-eastern tip of the Armenian Highland. As far as the Bagratunis are concerned, some sources consider them to be natives of Armenia, while others claim a Jewish origin for them.

The author notes that most researchers have rejected the hypothesis of a Jewish origin for the Bagratunis, for different reasons.

The author then highlights, among several other details, the fact that the word "baga", part of the dynastic name of the Bagratunis, is also found in several inscriptions and, with minor variations, in the names of different localities in the Kingdom of Urartu. After analysing and summing up such details of geographical and historical significance, he concludes that the Yervandunis and the Bagratunis originated in the same location, the southern district of the Armenian Highland. He asserts that by the sixth century B.C., these two dynasties had taken into their hands the political and military mantle of the country and had consolidated themselves into a natural coalition. By lining up the names of several Armenian localities, which are linked to the names of these two dynasties, the author depicts the possible trajectory that these two dynasties followed to reach the Armenian hinterland.

The author reiterates the opinion of Nicholas Adonts that the Bagratunis had originated in the south of the Armenian Highland on an Armenian-Iranian ethnic basis to conclude that the Yervandunis had a very similar origin.